ԴԻԱԿԻԶՄԱՆ ԾԵՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Մ.Թ.Ա. II-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Տիրացյան Ն. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան)
astghul@hotmail.com

Բանալի բառեր՝ թաղման ծես, միջին բրոնզ, Ուրարտու, հնագիտություն:

Դիակիզման ծեսը ՀՀ տարածքում ի հայտ է գալիս Միջին բրոնզի դարաշրջանից (Վանաձոր, Քարաշամբ, Լոռի բերդ, Արուճ և այլն), թռեղք-վանաձորյան մշակույթի թաղումներում: Դրանք բոլորն աչքի են ընկնում բարդ կառուցվածքով, շքեղ, հարուստ ու բազմազան գույքով և հաճախ անվանվում են «իշխանական» կամ «արքայական» թաղումներ: Քարաշամբի դամբարանադաշտից հայտնի է միայն մեկ դիակիզումով թաղում, որը, ի տարբերություն նախորդների, պատկանում է կարմիրբերդյան մշակույթին և թվագրվում է մ.թ.ա. XVIII դ.: Այն մյուսներից նշանակալիորեն տարբեր է. դիակիզված հանգուցյալի մնացորդները տեղադրված են աճյունասափորի մեջ, և թաղումն էլ աչքի չի ընկնում նախորդների ճոխությամբ:

ՀՀ տարածքում դիակիզումով թաղումները կրկին ի հայտ են գալիս ուրարտական դարաշրջանում (մ.թ.ա. VIII-VII դդ.), միայն Արարատյան դաշտի տարածքից: Ի տարբերություն միջին բրոնզեդարյան թաղումների, հարստությամբ բավական տարբեր են՝ մի մասը աչքի է ընկնում շատ հարուստ, մյուսները՝ միջին և աղքատ թաղման գույքով: Դրանք բոլորը թաղումներ են աճյունասափորների մեջ, տարբեր տեղադրությամբ՝ ժայռի ծերպերում, հողում, դամբարանում: Թանգարանային ֆոնդերում կան մի շարք չհրատարակված և, ցավոք,

առանց ուղեկցող գույքի աճյունասափորներ՝ գտնված Կարմիր բլուրից (մ.թ.ա. VII դ.):

Միջին բրոնզե դարում դիակիզման ի հայտ գալը մասնագետների կողմից բացատրվում է վաղ բրոնզե դարից հետո տեղի ունեցած էթնիկական և սոցիալական փոփոխություններով: Իսկ ուրարտական դարաշրջանում այն, մեր կարծիքով, բնորոշ է եղել դրսից եկած էթնիկական մի փոքր խմբի, որն Արարատյան դաշտ է բերվել ուրարտական արքաների՝ բնակչության վերաբնակեցման քաղաքականության արդյունքում:

CREMATION RITUAL IN ARMENIA DURING II-I MILLENNIUMS B.C.

Tiratsyan N. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)